

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՄՈՏ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-ԻՆ ԺԱՄԸ 09:30-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ

Մասնակցությամբ՝

- ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ՝ Առնակ Ավետիսյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի Գլխավոր քարտուղար՝ Արամ Հովհաննիսյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետի խորհրդական՝ Սաթենիկ Թովմասյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետի խորհրդական՝ Ֆելիքս Պողոսյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների
- ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետի/Տաթևիկ Մկրտչյան/

Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում առկա մի շարք հրատապ խնդիրների քննարկում

Քննարկվեցին՝

Հարց 1. 2024 թվականի սուբվենցիայի ամբողջական փաթեթները սահմանված ժամկետներում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնելու մասին

/ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ – Էդվարդ Հովհաննիսյան/

Հանձնարարական՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Աշոտ Հովհաննիսյանին և Զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ Լիլիթ Մուշեղյանին՝

Մինչև 2023 թվականի դեկտեմբերի 5-ը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնել 2024 թվականի սուբվենցիայի ամբողջական փաթեթները:

Ժամկետ՝ 05.12.2023թ.:

Հարց 2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի մի շարք բնակավայրերում թվաքանակով ավելի շատ բնակեցված Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածներ հետ հանդիպումներ կազմակերպելու մասին

/ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ – Էդվարդ Հովհաննիսյան/

Հանձնարարական՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական Սաթենիկ Թովմասյանին, Արմավիրի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ Գոռ Հովհաննիսյանին,

առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Ասթինե Ապիտոնյանին, անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Դավիթ Դավթյանին՝

2023 թվականի նոյեմբերի 23-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Քարակերտ և Մեծամոր համայնքի Նոր Արմավիր գյուղերում կազմակերպել հանդիպումներ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածների հետ՝ նրանց աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրերին ծանոթացնելու, ինչպես նաև նրանց հուզող տարաբնույթ խնդիրներն արձանագրելու և հնարավոր լուծումներ տալու նպատակով:

**Ժամկետ՝ 23.11.2023թ.:**

### **Հարց 3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում նախորդ տարիների և 2023 թվականի սուբվենցիոն ծրագրերի ընթացքի վերաբերյալ**

/ Հայաստանի Հանրապետության  
Արմավիրի մարզպետ – Էդվարդ Հովհաննիսյան/

#### **Հանձնարարական՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ Լիլիթ Մուշեղյանին՝

Ամփոփել և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին ներկայացնել ներկայացնել նախորդ տարիների ընթացքում շինարարությունը ավարտված, ընթացքի մեջ գտնվող և չսկսված, ինչպես նաև 2023 թվականի սուբվենցիոն ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն:

**Ժամկետ՝ 27.11.2023թ.:**

### **Հարց 4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի բնակավայրերում Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված սովորողների՝ հանրակրթական ուսումնական հաստատություններ հաճախելու վերաբերյալ**

/ Հայաստանի Հանրապետության  
Արմավիրի մարզպետ – Էդվարդ Հովհաննիսյան/


#### **Հանձնարարական՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Սոնյա Բուդաղյանին՝

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների սովորողներին կրթական գործընթացից դուրս չթողնելու նպատակով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքապետերին ուղղված համապատասխան շրջաբերական գրությամբ և ձևաչափով **5-օրյա ժամկետում** հավաքագրել և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին ներկայացնել ամփոփ տեղեկատվություն՝ համայնքներում բնակվող Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված դպրոցահասակ երեխաների հանրակրթական ուսումնական հաստատություններ հաճախումների վերաբերյալ:

**Ժամկետ՝ 30.11.2023թ.:**

 Недействительная подпись

X 

VERIFIED OCSP 24.11.2023 17:40:57 GMT+4

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

Արձ.՝ Դ. Դավթյան